

# ՕՃԻ àô Ä² Øªº øàì àè ¶àË² Üº² ÜÆ Ðºì

Փետրուար 20, 2008: Կը մտնեմ Պէլ-րութի միջազգային օդակայանը՝ ճամբորդելու համար Կիպրոս: Ծարքը երկար է՝ եւ պէտք է համբերել՝ եւ սպասել կարգիդ: Այս տեսակ պարագաներու, շատ դիրքին է խօսակցութիւն մը սկսիլ, ետեւի կամ առջեւի շարքի վրայ կեցած ուրիշ ուղեւորի մը հետ: Եւ անպայման՝ մեր Միջին Արեւելքի մշակույթին մեկնելով՝ կը խօսիս ու կը պատմես կեանքի ամբողջութեամբ եւ անպայմանօրէն կը հասնիս քաղաքականութեան ու լիբանանեան մաշեցնող եւ յոգնեցող իրավիճակին: Եւ անպայմանօրէն կը լսես թէ ինչպէս մարդիկ յոգնած են այլեւս՝ եւ կամ յոյս չկայ՝ այս երկրէն...: Բայց այս գոյցը կը սիրես...: Քանի մեր կեանքերը կազմող մշակույթը հիմնադրուած է նոյնիման պէտքերով...: Եւ այս "կրկնութիւնը" թող մնայ՝ բայց նաեւ վնաս չունի՝ շատնայ...: Քանի շատ անելի հաճելի է՝ քան այն՝ որ պաշտօնական է՝ որ իրաքանչիւր կեանք ինք իր մէջ է առանց հաղորդականութեան եւ հաղորդակցութեան:

Բայց պէտք էր սպասել կարգին: Եւ որպէսզի համբերութիւնս "սեղմեմ" դարձայ ետեւ՝ տեսնելու թէ շարքը մինչեւ ո՞ր է...: Ու չափաւոր անձ մը՝ իմ ետեւ կեցած՝ բայց շատ անելի հաճարտ կը սպասէր իր կարգին:

Եւ դարձայ առջեւ՝ եւ սկսայ մտաբերել...: "Եւ տեղ մը տեսած եմ այս պարունը...":

Բայց տակաւին պէտք էի սպասել իմ կարգին... եւ դարձայ ետեւ դարձայ՝ ձեռով մը ստուգելու թէ բոլորիս ալ համբերութիւնը կրճար նաեւ իր սահմանը ունենալ...:

Բայց ան՝ նոյն հանդարտութեամբ իր կարգը կը սպասէր. նշմարեցի իր ճարտարական պայուսակներու հետ կար նաեւ կիթառի մեծ պայուսակ...: Եւ միշտ էին մտաւետամներս...: Տեղ մը տեսած էի զինք՝ եթէ ոչ անձնակալ՝ բայց գէթ նկատուով...: Բայց նաեւ մտիկ ըրած էի մէկ օր առաջ իր հարցազրոյցը վստահ Ձայնի հետ:

Եւ մեր հայկական ու անոր վրայ անցնելով միջին արեւելեան կենցաղը ու հարազատութիւնը ըսի իրեն: "Դու՞ն Եւրոպա Գոյանեան ես՝ չէ...":

Պէտքիս վրայ գծուեցաւ ծիսործ՝ բայց նաեւ հանգստութիւն մը եւ երեւի ապահովութիւն մը...: Ձեռքը երկնցնելով բարեւեց ինձի եւ ըսաւ, "Այո՛, շնորհակալ եմ": "Չըրցայ ներկայ գտնուիլ Պէլրութի եղբայրիդ", ետաւ պատասխան: "Ծամբորդած էի այդ օրը՝ բայց մտիկ ըրի հարցազրոյցը", շարունակեցի:

"Կը մեկնիմ Կիպրոս՝ համերգ մը ունիմ Ուրբաթ օր՝ Նիկոսիոյ մէջ", ըսաւ Եւրոպա:

Եւ երկուքով ներկայացուցինք մեր սոմերեղ եւ ճամպորդները՝ գոյցը շարունակելու ցանկութեամբ՝ քանի երկուքս ալ նոյն օրանալով պիտի մեկնէինք Կիպրոս:

Եւ պատահեցաւ անակնկալը: Յայտարարուեցաւ թէ Կիպրոսի թռիչքը պիտի ուշանար մէկ ժամով...: Եւ արդէն մէկ ժամ ալ առաջ էինք նախօրօք որոշած թռիչքի ժամէն՝ այնպէս որ կար երկու ժամ գոյցելու...:

Եւ երկու ժամ Եւրոպա Գոյանեանի հետ՝ կերտեց ոչ միայն բարեկամութիւնը՝ այլ անպայմանօրէն հայ մշակույթի եւ երաժշտութեան հանդէպ հաւատքը ու նուիրումը...: Եւ Ուիլյամ Սարուեան՝ իրաւացի էր՝ վաղուց գիտցած ու տեսած էր թէ՛ "երբ երկու հայ հանդիպին որեւէ մէկ տեղ՝ կը ստեղծեն մէկ նոր Հայաստան":

Եւ այդ "Նոր Հայաստան" էր՝ որ երկուքով՝ երկու ժամուայ ընթացքով՝ ստեղծեցինք...: Երկու հայ նախախնամութեամբ թէ այլ՝ հանդիպեցան Պէլրութի միջազգային օդակայանը...: Եւ հայ՝ մշակույթը՝ անոր ժառանգը ու յատկապէս անոր պայքարը՝ միացուց մեր մտքերը ու մտահոգութիւնները...: Եւ այս է հայուն գոյապայքարը՝ այդպէս չէ...:

Եւրոպայի հայրը՝ 1922-ին՝ տակաւին պատանի գաղթած է Հայէստան: Եւ Հալէպը սփիւռքահայ մեր իրականութեան մէջ այն "ամբողջ"-ներէն է՝ որ տուած է իր դրոշմը՝ Ներուզգան շարունակ: Եւ այս ազգային իրաւաստուկ "դրոշմով" նաեւ սնած է Եւրոպայի հայրը...: Նոյնիսկ՝ երբ ան՝ օտար արեւմուտք մեծ-սնած է եւ նակատագիրն ալ այլ եղած...: Եւրոպայի մայրը եղած է տեղացի բայց միշտ յարգած է հօրս ինքնութիւնը եւ "դրոշմը": Եւ հաստատիմ մնացած է այդ ինքնութեան՝ նոյնիսկ երբ ամուսինը յարաբերաբար կամուսի մահացած է...: "Բայց լաւ հայերէն կը խօսիս" ըսի Եւրոպային: Յատկապէս երբ իմացայ թէ հայրը կանուխ մահացած է եւ մեծցած է տեղացի մօր խնամքին տակ:

"Մայրս հաստատիմ մնաց հօրս ինքնութեան եւ համոզմունքներուն" ըսաւ Եւրոպա...: "Յատուկ ուշադրութիւն տարաւ որպէսզի եղբայրս եւ եւ հայերէն սովորեց" շարունակեց: Եւ մեր խօսակցութիւնը շարունակեցիք միշտ հայերէնով...: Եւ մէկ-մէկ Եւրոպայը եղաւ Յակոբ...: Եւ Եւրոպայն չանհամարձակեցաւ՝ այլ ընդառաջեց քիչ մը կատակիս բայց նաեւ ինքնութեան կանչին...:

Եւրոպայն շատ սիրած է Պէլրութը: Եւ օղակալանը տեսնելով՝ անելի կապուեցաւ մայրիներու այս երկրին...: Աշխոյժ էր Պէլրութը՝ անոր շնորհակալ, ուսուցանողութիւնը, կեանքի կապուածութիւնը բայց նաեւ տագնապը...: Այս բոլորը ստեղծած էր զգացողութիւն մը իր արտին մէջ, որ անելիով ամբապնդուեցաւ օղակալանի հարազատութեամբը...:

Միշտ է Եւրոպայը: Պէլրութի մեր օղակալանը ունի հարազատութիւն մը, գոր կ'սպիրիմ իրաքանչիւր թռիչքի ընթացքին...: Բայց այդ հարազատութիւնը կու գայ Պէլրութի ուսուցանողութեան: Այն ուժը՝ որ միշտ կենսունակ կը պահէ մեր քաղաքը: Այս ուժը պէտք չէ որ մեռնի...:

Եւրոպայն սիրած էր Պէլրութի հայ գաղութը: Մշակույթի հանդէպ անոր սէրը եւ նուիրումն էր: Խօսեցաւ կապ-

զայի ծրագիրներու մասին եւ որ անպայմանօրէն կ'ուզէ իրականացնել Պէլրութի եւ հայ գաղութի հետ:

Լսեց Եւրոպայն պատերազմի արհաւիրքին մասին: Այդ արհաւիրքի մէջէն անցած իրաքանչիւր արարած կեանք: Այդ բոլորին մէջ՝ լսեց թէ ինչու եւ ինչպէս լիբանանահայրը կապուած է կեանքին եւ ստեղծագործութեան: Այս ալ լիբանանահայ գաղութի յատուկ ուժն է...: Ուժն է, որ կը շարունակէ նոյնիսկ երբ "մահահանգ" շուրթի ծորիկ մէջ կը քալէ...: Այս՝ յաճախակիօրէն:

Եւրոպայն հայ արուեստագէտն է ուրում արեւան կանչը ժողովուրդի մշակույթի ստեղծագործական աշխատանքի համար է: Կապուած է մայր հայրենիքին: Յանձնարարի այցելութիւններով, համերգներով եւ դասաւանդութիւններով, ան կը գետնէ նաեւ իր "լուսն" հայրենիքի մշակութային կեանքին համար:

Եւրոպայն իր արուեստի միջոցաւ՝ կ'ուզէ հայ երաժշտութիւնը ներկայացնել ուր որ ալ գտնուի...: Ունի մէկ մեծ մարտահրաւեր...: Բայց անելի ճիշդ պարտականութիւն եւ պատասխանատուութիւն: Եւրոպայն կատարած է իր ուսումնասիրութիւնները՝ թէ կիթառը ոչ անպայմանօրէն սպանական "իրաւաստուկ" է...: Նաեւ հայկական. "հիթիներու օրերէն" հայերը կիթառը կը գործածէին որպէս երաժշտական գործիք՝ կը բացատրէ Եւրոպայն: Հայը՝ որ հին ժողովուրդ է, եւ որում կազմատրուը կ'երթայ մինչեւ եօթներորդ դար քրիստոսէ առաջ՝ անպայմանօրէն կերտած է իր մշակույթը: Եւ Եւրոպայն կը փորձէ ճիշդ այս հին՝ բայց ոչ հինգած՝ մշակույթը ներկայացնել հանրութեան: Եւրոպայն հայն է՝ որում "հիթին պարտք"ն է ըլլալ հայ մշակույթի դեպքս եւ ուր որ ալ գտնուի...:

Ուրբաթ, 23 Փետրուար 2008-ին, Նիկոսիոյ Գալաթիոյ համերգարանին մէջ Եւրոպայն այդ նոյն "հիթին պարտք"ը դրաւ յոյն եւ հայ հասարակութեան առջեւ...: Ներկայացուց կտորներ Պախէն եւ Քեռուրուպուլէն՝ ուր ցոյց տուաւ իր արուեստագէտի բարձր տաղանը: Բայց Մայրաք Նովան, Կոմիտասը եւ Հայկական ժողովուրդային-Ազգային պարերու հաւաքածոյին մէջ Եւրոպայն տուաւ անելին...: Անելին՝ հայ հոգին էր Եւրոպային: Այդ "հոգին" ան արտապայտեց իրաքանչիւր հայկական բաժնի մէջէն՝ տալով հայուն գոյապայքարի երթը եւ անոր մշակութային ժառանգի մեծութիւնը եւ աւանդը...:

Երկու ժամ՝ Եւրոպայն Գոյանեանի հետ: Այդ երկու ժամուայ ընթացքին երկուքով՝ սարեցանք հայ մշակույթը իր ամբողջութեամբ: Այս պէտք է մնայ հայուն գոյապայքարի մարտահրաւերը...: Երկուքով՝ եւ անպայմանօրէն հաւաքականութեամբ՝ պահել հայկական մշակույթը իր հարազատութեամբ...:

Եւ Եւրոպայն Գոյանեան՝ այս "հարազատ" մշակույթի մէկ լաւ դեպքաներէն մէկն է...:

ՀՐԱՅՐ ԸՆԴՈՒՄՆԱՆ

# ՀԱՅՈՒՆԻ ՄԸ Ի ՊԱՏՈՒԻ ՍՈՐՊՈՆԻ ՄԷՋ

Սորպոնի համալսարանը շատ ժողովուրդներու եւ յատկապէս հայերու համար հինգէն ունեցած է հմայիչ հանգամանք մը: Ան այսօր ան կը մնայ բոլորիս համար գիտութեան, ուսման եւ ձեռնով մը հաղափարութեան խորհրդանշանը: Այդ պատճառով ալ մեզի համար այդ համալսարանը աւարտող իւրաքանչիւր հայ կամ հայուհի իբր հպարտութեան նոր պատճառ է: Մէկը, օր մը գուցէ, պիտի փորձէ կազմել անոնց ցանկը: Գեղեցիկը 13-ին, կազմուելիք այդ ցուցակին աւելցաւ Գոհար Յարութեանի անունը: Այդ օրը, համալսարանը համալսարանի "Սալ տէր Գ.Ք." պատուոյ դահլիճին մէջ Գոհար Յարութեանի պաշտպանեց տոբորակն իր թէքը չորս անուանի գիտնականներէ բաղկացած յանձնախումբի մը առջեւ: Երկուքը՝ փրոֆ. Անտրէ Լոսի "Սէն Սեթ" աստուածաբանական ուղղափառ կանոնի դասախոս, եւ Գահինճեա Քրափի՝ Փարիզի կաթողիկէ համալսարանի դասախոս, "Միսակն աստուածաբանութեան" մասնագէտ են: Յանձնախումբի միւս երկու անդամներն էին ու միաժամանակ թէքի զոյգ ղեկավարները՝ փրոֆ. Ժան Փիէր Մահէ, Փարիզի կաթողիկէ համալսարանէն եւ փրոֆ. Փիէր Մարավայ, Փարիզ Գ. Սորպոնի համալսարանէն:

Տիկին Յարութեանի ներկայացուցած թէքին նիւթն էր՝ "Պատարագի հայկական կնի կանոններուն քրիստոսաբանութիւնը": Յիշեմք այստեղ որ Գոհար Յարութեանն այն հազարգիւտ կիներէն է որոնք համարձակած են մտնել աստուածաբանութեան դժուար եւ կիներու ինչ մասշնի ասպարէզին մէջ: Ան Հայաստան ծնած է երբ տակաւին երկիրը կը ղեկավարուէր անաստուածութեան սկզբունքներով: Սակայն բախտը ունեցած է ձեռնը հաւատացեալ եւ անդապահ ընտանիքի մը մէջ, ուր իր մեծ մայրը կարծէ բոլորին համար "հոգեւոր մայր"-ի մը պաշտօնը կը կատարէ: Սորպոն ընդունուելէ առաջ, Գոհար Յարութեանն փարիզեան երկու բարձր հաստատութիւններու մէջ ուսանած է. նախ կաթողիկէ համալսարանը եւ յետոյ աստուածաբանութեան "Սեն Սեթ" ուղղափառ կանոնը: Ան մեծ յաջողութիւններ արձանագրած է մագիստրոսութեան եւ Տէ. Ը. Ա.-ի աստիճանները ստանալու ժամանակ եւ երկու հաստատութիւններուն մէջ պաշտօնավարող դասախոսներուն զննատանններուն արժանացած է: Տիկին Յարութեանն բազմաթիւ յորտածներու հեղինակն է գլխաւորաբար հայ եկեղեցւոյ քրիստոսաբանութեան վերաբերեալ: Միւս բոլոր գործերուն նման, Գո-

հար Յարութեանի այս նոր աշխատութիւնը ունի գիտական հիմնաւորած, հեղինակաւոր եւ բազմաբնոյք հանգամանք մը: Կարելի է գայն միաժամանակ ընկալել թէ՛ որպէս աստուածաբանութեան, թէ՛ պատմութեան եւ թէ՛ բանասիրութեան թէք: Գ. Յարութեանի տոբորակն աստուածաբանութեան կրօնական մարդաբանութեան (Սորպոնի համալսարանը) եւ "Բանասիրութեան եւ Միջին Արեւելքի կնի կրօններու պատմութեան" (Էնթիքի Գարդիլ): Ուստի իրականութեան մէջ՝ Գ. Յարութեանն ոչ թէ մէկ, այլ երկու տոբորակն աստուածաբան կը պաշտպանէր նոյն օրը:

Երեւ ժամ տեսած պաշտպանութեան ընթացքին, Գոհար Յարութեանն ենթարկուեցաւ յանձնախումբի անդամներուն տեղացող սուր հարցումներուն: Ան առանց յուզուելու, խիզախօրէն եւ առանց որեւէ զիջումի պատասխանեց բոլոր հարցումներուն, մեծ գոհացում պատճառելով թէ՛ յանձնախումբի անդամներուն եւ թէ՛ ներկայ ունեցողներուն: Իսկապէս, այս երեք ժամերը բոլորիս համար եղան մատուր եւ հոգեւոր ասպարէզներու հարուստ պահ մը:

Հուսկ դատական յանձնախումբի կազմը առանձնացաւ դոկիակ խորհրդակցութեան մը համար: Տասնհինգ վայրկեան յետոյ, դատակազմի անդամները կրկին կը բարձրանային ամպիւրն: Պահը պաշտօնական էր եւ յուզիչ: Ներկայները յոսնկայս լսեցին դատակազմի որոշումին ընթերցումը փրոֆ. Ժան Փիէր Մահէի կողմէ. տիկին Գոհար Յարութեանն կ'արձագանքէր տոբորակի տեղեւորսին եւ համալսարանական ամենաբարձր գնահատականին՝ "Յոյժ պատարագ": որուն պէտք է անցնել "յանձնախումբի շնորհաւորութիւնները": Գոհար Յարութեանն, իր ամուսինին՝ Ռոմաիլի մը պաշտօնը կը անշուշտ մեծ էր: Սրահին մէջ առաւօտեան ժամը իննէն ի վեր ներկայ էին նաեւ իրենց կողքին աղջնակները՝ Տարիսիկն ու Նոյնիքը: Տոբ. Յարութեանն անհամարձակ քննարկեց իր տղայի շնորհալուծութիւն յայտնելով յանձնախումբի անդամներուն, իր նոր յաջողութիւնը կը ձեռն իր եկեղեցիին: Ներկայները պատասխանելով անոր, միաբերան կ'երգէին "Ուրախ Լեւ Սուրբ եկեղեցի" շարակարգը:

Մեր արտաբնի շնորհաւորութիւնները տիկին Յարութեանն այս բացառիկ պահին համար, այն համոզումով որ ան ոչ թէ պակաս է, այլ նոր սկիզբ մը եւ կեղեցանուէր քեզուն ծառայութեան մը հիմքը:

## ՊԱՅՈՒՆԸ ԲԱՌ

Կ	Ն	Ա	Տ	Ե	Ն	Ր	Ա	Յ	Կ	Ա	Տ	Ա	Յ	Ա	Տ	Ո	Ի	Կ	
Ա	Յ	Ր	Ա	Մ	Ր	Ա	Մ	Ա	Պ	Տ	Վ	Ն	Պ	Ա	Ս	Կ	Կ	Ա	
Մ	Ա	Տ	Բ	Ս	Կ	Ե	Ր	Պ	Ա	Ր	Ա	Ն	Ե	Կ	Ա	Ր	Զ		
Ա	Տ	Ա	Ր	Ա	Պ	Ա	Վ	Ր	Ի	Ք	Ո	Մ	Ր	Ո	Մ	Ր	Շ	Ա	Ի
Հ	Ա	Կ	Ս	Ա	Շ	Ա	Յ	Ա	Ր	Հ	Ա	Ի	Ա	Ք	Ո	Ի	Ա	Ն	Պ
Հ	Կ	Ա	Ա	Ո	Մ	Ա	Ր	Ն	Յ	Ա	Ր	Ա	Մ	Ի	Ո	Գ	Շ	Ի	Ա
Ո	Ն	Շ	Ի	Տ	Յ	Ա	Շ	Ք	Ա	Ր	Ն	Ե	Ա	Ն	Վ	Ա	Ք	Տ	Կ
Վ	Ո	Ն	Ն	Ի	Ս	Տ	Տ	Ա	Վ	Ա	Ի	Տ	Տ	Ա	Ա	Տ	Յ	Ո	Ա
Ա	Յ	Շ	Ա	Ր	Տ	Ա	Ր	Ա	Կ	Կ	Ս	Ն	Ի	Շ	Ն	Յ	Ա	Մ	Ր
Ն	Դ	Ր	Ա	Ղ	Ե	Գ	Վ	Ն	Կ	Ա	Ա	Մ	Ա	Ա	Ա	Ն	Ի	Ա	
Ի	Վ	Յ	Ո	Ն	Կ	Ր	Կ	Ա	Պ	Ա	Հ	Շ	Կ	Կ	Կ	Յ	Գ	Ա	Ս
Ն	Պ	Ա	Տ	Ա	Կ	Ա	Տ	Ն	Ն	Ո	Շ	Ի	Ա	Ա	Ա	Ա	Ի	Ի	Ա
Տ	Պ	Վ	Ս	Մ	Լ	Ր	Ո	Ի	Ա	Կ	Ա	Շ	Ա	Շ	Ն	Մ	Ն	Ո	Հ
Յ	Ա	Ն	Ե	Տ	Ա	Հ	Ա	Ր	Վ	Ա	Հ	Ա	Ն	Ե	Ա	Ո	Ա	Ր	Ա
Ա	Ր	Ա	Հ	Մ	Ա	Յ	Ք	Ր	Ի	Ո	Պ	Ա	Տ	Ի	Շ	Խ	Ի	Ն	Ի
Յ	Ա	Ս	Ի	Կ	Ր	Կ	Ն	Ա	Կ	Ր	Ի	Ա	Գ	Ո	Ի	Ս	Ա	Ն	Ա
Հ	Կ	Ո	Ր	Կ	Ո	Տ	Ա	Վ	Ա	Ր	Մ	Ր	Ե	Շ	Ն	Ե	Շ	Ն	Ք
Ա	Գ	Ն	Ա	Ս	Ի	Ո	Գ	Շ	Յ	Գ	Ա	Ի	Թ	Կ	Ա	Ն	Ե	Յ	
Ս	Հ	Ա	Ս	Ա	Կ	Ա	Ա	Ա	Ն	Կ	Ո	Ի	Մ	Ա	Կ	Ր	Ա	Կ	
Կ	Ն	Ա	Ե	Տ	Ա	Մ	Մ	Գ	Ի	Տ	Ա	Կ	Ի	Յ	Ո	Ն	Զ	Վ	Կ

**Պահուած քաղո՝ ԳԱԶԱՆՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ (6 տար)**  
Նախորդինգատասխանը՝ ՍԱՐԱՏԱԿ

ԱՎՆՈՑ	ՀԱՄԱԿ
ԱՆԱԿՆԿԱԼ	ՀԱՍԱԿ
ԱՆԳԻՆ	ՀԱՍԱՐԱԿ
ԱՆԿՈՒՄ	ՀԱՍԿ
ԱՆՏԻԱԿԱՆ	ՀԱԻԱՔ (2)
ԱՊԻՋԱԿ	ՀՄԱՅՔ
ԱՊՐԱՆՔ	ՀՈՎԱՆԻ
ԱՊՐՈՒՄ	ՀՐԵՏ
ԱՍՊԱՆ	